№ 124 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27 № 124

ՔԱՌԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրախանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. կենդանի խօսքով հասկացրէք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջաց մամուլից. Ուղեցոյցի պահանջը. Նամակ Ներքին-Ախատայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանցլեր կապրիվիի հրաժարականը. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պիրամիդների աշխարհում.

ՈՒՐԻՇ ԿԵՐՊ ՉԷՐ ԷԼ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Վերջին լուրերը, որոնք ստացվում են Թիւրքաց Հայաստանից, ցոյց են տալիս, որ Թիւրքաց կառավարութիւնը վերջապէս այն համոզման եկաւ, որ պէտք է զինաթափ անել հայի դիէյի քրդական գնդերը, և արդէն մի քանի տեղեր զինաթափ անելու փորձեր եղան:

Երբ սրանից մի քանի տարի առաջ Թիւրքաց կառավարութիւնը ձեռնարկեց քրդերի զօրագնդեր կազմելուն, անմիջապէս ամէն կողմից այն կարծիքը յայտնեցին, որ դա մի մեծ սխալ է Թիւրքաց կառավարութեան կողմից, օրովհետև քիւրդ տարրի նման մի արիւնարբու տարրի ձեռքը զէնք տալ, կը նշանակէ՝ ստեղծել երկրի համար անսպառելի աւարառութիւնների և անվերջ խառնակութիւնների աղբիւր:

Թիւրքաց բարձր կառավարութիւնը չը հաւատաց այդ զուշակութիւններին, չը հաւատաց այդ հիմնական, բարեկամական կարծիքին, և Փոքր-Ասիայի նահանգներում կազմակերպեց համիդիէյի գնդերը:

Բայց ահա հազիւ մի քանի տարի անցած՝ նոյն Թիւրքաց կառավարութիւնը, ինքը արդէն համոզվում է, որ ճշմարիտ, պետական տեսակէտից մի մեծ սխալ էր քրդական տարրին զինաւորելը, և երկրի ապահովութիւնը նրան յանձնելը:

Սկզբում զինաւորված քիւրդ տարրը իր զէնքի ոյժը փորձում էր միմիայն խաղաղ, անզէն, երկրագործ ժողովրդի վրա: Բայց քիչ անցած, նա սիրա առաւ, և սկսեց կողոպտել նոյն իսկ պետական պօստը, նոյն իսկ կառավարչական պաշտօնեաներին, և նորերս նրա յանդգնութիւնն այնտեղ հասաւ, որ մինչև անգամ մի վալի, մի նահանգապետ կողոպտվեց համիդիէյի զինուորների ձեռքով և հազիւ կարողացաւ իր կեանքը փրկել:

Ահա այդ անտանելի դէպքերը և այն փաստը, որ համիդիէյի զինուորները սկսել են յարձակում գործել նոյն իսկ պետական ատենաւորների վրա, նոյն իսկ կառավարութեան ներկայացուցիչների վրա, ստիպեց Թիւրքաց կառավարութեանը աւելի լուրջ նայել գործի վրա և միջոցներ ձեռք առնել՝ ազատելու երկիրը մի այնպիսի սարսափելի տարրից, ինչպիսին է զինաւորված քրդական զօրագունդը:

Տարաբաղդաբար, կառավարութեան այդ վերջին խելացի մտադրութիւնը այժմ արգելքների է հանդիպում, որովհետև զինաւորված քրդերը հրաժարվում են յետ տալ իրանց զէնքերը, և բացարձակ դիմադրութիւն են ցոյց տալիս: Այդպիսով դուրս է գալիս, որ այն քրդերը, որոնք սրանից մի քանի տարի առաջ զէնքեր էին ստանում՝ կառավարութեան պաշտպանութիւն ցոյց տալու համար, այժմ՝ զինաւորված լինելով, ոչ թէ միայն չեն պաշտպանում կառավարութեանը, ոչ թէ միայն չեն հնազանդվում, այլ դարձել են կառավարութեան նոր հակառակորդներ, և բացարձակ ու անընկճելի թշնամիներ:

ԿԵՆԴԱՆԻ ԽՕՍՔՈՎ ՀԱՍԿԱՑՐԷՔ

Բժշկական քննութիւնը ցոյց տուեց, որ Կուբ գետի ջրի մէջ խօլէրայի բացիլներ կան, որից և առաջանում են այն խօլէրային դէպքերը, որոնք տեղի են ունենում մեր քաղաքում.—և ահա թէ քաղաքային վարչութիւնը, և թէ բժշկասանիտարական ժողովը՝ հրաւէր են կարդում ժողովրդին՝ զգուշանալ և գործ չածել Կուբ գետի հում ջուրը:

Ահա մի դէպք, երբ ինքը ժողովուրդը, իր սեփական միջոցներով, իր զգուշութեամբ, առանց կողմնակի օգնութեան, կարող է ազատ պահել իրան վարակումից և վտանգից:

Տարաբաղդաբար, մեր հասարակ ժողովուրդը գրագէտ չէ և լրագիրներ էլ չէ կարդում, ուստի նրա ականջին անմիջապէս չեն հասնի ոչ քաղաքային վարչութեան, ոչ էլ բժիշկների օգտակար հրաւէրները: Բժիշկները ստիպված են բարձրացնում, որ Կուրի ջուրը վարակված է խօլէրային բացիլներով. քաղաքային ինքնավարութիւնը հրաւէրներ է կարդում,—իսկ մեր հասարակ ժողովուրդը, անտեղեակ այդ բոլորից, շարունակում է ահագին քանակութեամբ կուլ տալ կեղտոտ Կուրի վարակված ջուրը, և դրա հետ միասին միլիոնաւոր բացիլներ.—և ահա դրա հետևանքն է այն, որ այդ բօպէին, երբ ամբողջ Կովկասի ոչ մի տեղում խօլէրա չը կայ, Թիֆլիսը, որը խօլէրայի կողմից ամենաապահով քաղաքն էր համարվում, սկսել է խօլէրայի բուն դառնալ...

Ահա մի լաւ առիթ, երբ ժողովրդին մօտ կանգնած ինտելիգենտ մարդիկ, մեր ծխական դպրոցների ուսուցիչները և ուսուցչուհիները, վերջապէս մեր բազմաթիւ քահանաների դէթ փոքրաթիւ հասկացող անդամները կարող են մեծ ծառայութիւն մատուցանել ժողովրդին, անմիջապէս հաղորդելով նրան, որ զգոյշ կենան Կուրի ջրից և վարակման առաջն առնեն:

Եթէ ժողովրդին մօտիկ կանգնած ինտելիգենտ անձինք տարածեն իրանց շրջաններում այդ միտքը, և եթէ, վերջապէս, մեր քահանաները, եկեղեցու բեմից, կենդանի խօսքով հրաւէր կարդան ժողովրդին՝ վարակված ջուրը գործ չածել,—մենք չենք կասկածում, որ երկու շաբաթ չանցած, մեր քաղաքի անոյշ անկիւններում ընկած անակների մէջ էլ, ամենագէտ բնակիչներն անգամ կիմանան, թէ որտեղից է ծագում խօլէրայի վտանգը և զգոյշ կը լինեն:

Ժողովուրդը լրագիր չէ կարդում, ժողովուրդը քաղաքային վարչութեան հրաւէրը չէ լսում: Ահա այդ մարդկանց պարաքն է՝ միջնորդ հանդիսանալ և կենդանի խօսքով ժողովրդին հասկացնել նրա օգուտը, նրա շահը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻՐԱՄԻԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Շրջելով Կաիրօի փողոցները, ձեր ուշադրութիւնը գրաւում է ամենաբարձր մնարէն, որի բարձրութիւնը մօտ քառասուն սաժէն է՝ դա է հռչակաւոր սուլթան Հասանի մզկիթի մինարէն:

Այդ մզկիթը ամբողջ մահմեդական աշխարհի պարծանքն է համարվում, և շինված է XIV-րդ դարում, բայց այսօր ներկայացնում է մի անանման, գեղանկար աւերածոյ: Տեսնելով այդ մեռայլ, հոյակապ շինութիւնը, նրա վեհ պարզութիւնը, մարդ մտածում է, որ իսլամն ես ունեցել է իր Միքէլ-Անջէլօն, միայն համակված զուրանի ոգով:

Հիացած այդ մզկիթի ճարտարապետական ոճով, կամենում էինք ներս մտնել, երբ դրանը կանգնած շէյխը յիշեցնում է մեզ, որ որքան աւերակ լինի սուլթան Հասանի մզկիթը, բայց, փառք Ալլահին, դեռ այն վիճակին չէ հասել, որ զեավուրը կարողանայ պղծել այդ սրբութիւնը իր կօշիկներով և առաջարկում է հագնել հողաթափներ, մի բան, որի հետ ընտելացել էինք դեռ Կ. Պոլսում: Մի փոքր բախշիշ մեղմացրեց ժանտ շէյխի զայրացկոտ դէմքը և հողաթափները քաշ տալով ներս մտանք: Մի հսկայական շինութիւն, որ բաղկացած է մի քանի մասերից, գմբէթը տեղ տեղ փլված, այնպէս որ պարզ, կապոյտ երկինքը ներքևից երևում է. ամեն կողմից առասպաղներից կախված են ջահեր, ամեն տեղ մարմարիոն, բրօնզից թափված պատկերներ, մօղակ յատակամածներ: Մէջը շինված է երկու մարմարեայ աւազան, մէկը թուրքերի, միւսը եգիպտացիների համար: Մի քիչ հեռու աւազանից բարձրանում է մի բեմ, սեղան, որտեղից առաջ սուլթանները յայտնում էին իրանց կամքը ժողովրդին: Պատերը միմեանց հետ միացած են մեծ կամարներով, որոնց վրա ոսկէ տառերով քանդակված են արաբական արձանագրութիւններ, իսկ պատերի վրա—դեղեցիկ արաբէսկներ, հին ճարտարապետութեան նկարներ:

Այդ վիթխարի պատերից ամբողջ հինգ դարեր նայում են ձեզ վրա, և նախկին մեծութիւնը մի փայլուն հակապատկեր է ներկայացնում այժմեան ամայութեան և աւերածութեան հետ:

Մէջտեղ կառուցված է սուլթան Հասանի դամբարանը, որ ուխտատեղի է մուսուլմանների համար: Սակայն ասում են, որ նրա մարմինը այդտեղ չէ հանգչում. մի կուրի մէջ սպանվելով, մարմինը անհետացաւ և այդ համարվեց իբրև պատիժ այն յանցանքի, որ նա գործել էր՝ կարել տալով մզկիթը շինող ճարտարապետի ձեռքերը, երբ սա աւարտեց շինութիւնը, որպէս զի չը կարողանայ մի ուրիշ այդպիսի ճարտար պլան նը-կարել:

Էլ Կարու միջնաբերդը, որ շինված է սարի վրա և որը մենք այցելեցինք դրանից յետոյ, այլ ևս մեզ վրա մի առանձին տպաւորութիւն չը գործեց սուլթան Հասանի հոյակապ մզկիթը տեսնելուց յետոյ: Այդ միջնաբերդը, որ շինվել է 790 թ-ին, փոքր քաղաքի պէս մի բան է ներկայացնում իր ամրութիւններով և զօրանոցներով: Այդտեղ է գտնվում անգլիական զորքը և այդտեղ են շարված անգլիական թնդանօթները, բերանները ուղղած քաղաքի վրա: Միջնաբերդի կենտրոնում գտնվում է Մուհամմէդ Ալիի, առաջին խեդիվի շինած չքեղ մզկիթը, իր դամբարանով: Նա կամեցել է շինել երկրորդ Այա-Սոֆիա և թէև մի փոքր նմանութիւն ունի, բայց շատ հեռու է նրա տաճարից և վեհութիւնից: Շքեղութիւն, փարթամութիւն, ճոխութիւն տիրապետում են այստեղ. յատակը ծածկված է գորգերով, որոնք, ինչպէս ասում են, բերված են Մէքքայից: Զուլածոյ պղնձէ անթիւ ջահեր, ոսկեայ աշտանակներ, գունաւոր լուսամուտներ, քանդակագործութիւններ, մարմարեայ աւազաններ և մի անկիւնում իրան Մուհամմէդ-Ալիի դամբարանը, ոսկեզօծ ցանկապատով շրջապատված, արմատենու տերևներով և դրոշակներով ծածկված, շլացուցիչ տպաւորութիւն են թողնում: Դա Այա Սոֆիայից յետոյ երկրորդ հռչակաւոր մզկիթն է համարվում իսլամական աշխարհի մէջ իր շքեղութեամբ և ճոխութեամբ:

Բայց մի բան, որ արժէ տեսնել միջնաբերդի մէջ, այդ այն պլատֆորման է մզկիթի ետեր, որտեղից բացվում է մի անկարագրելի գեղանկար տեսարան, մի ոքանչելի պանորամա, այնքան այդ պանորաման կախարդիչ և հմայիչ է: Ցների մի ահագին ծով, տափակ կտուրներով, այգիներ, անթիւ վերամբարձ մինարէներ, պալատներ, ոսկեզօծ գմբէթներ, աւերակներ, և դրանց ետևից՝ ջրանցքների կապոյտ և յողդողուն գիծը, արմատենու բուրաստանների և կանաչագոյն դաշտերի միջով. և հեռու հորիզոնում Հիզէի, խէոպսի պիրամիդները, դեղնագոյն Լիբիական աւազոտ անապատը, իսկ դէպի հիւսիս՝ Նեղոսի անհուն դելտան,—այդ բոլորը կախարդիչ կերպով ներգործում է մարդու վրա: Ամբողջ պատկերը լուսաւորված է վառ, հրեղէն փայլով. կարծես թէ ահա մի հրեղէն հորիզոն հեռուում շարժվում է: Իսկ աւազոտ անապատի մէջ, քաղաքից հեռու, նկատվում են միջին դարի խալիֆների լուռ ու անմռունչ դամբարանները: Առաջին անգամ այդ պանորաման տեսնողը կարծում է, թէ կարդում է Շահէրիզադէի առասպելները:

Մենք գնացինք նայելու և Յովսէփի ջրհորը: Աւանդութիւնն ասում է, որ այդ այն հորն է, որի մէջ ձգվեց Յովսէփ գեղեցիկը Փարաւոնի կնոջ պատճառով. բայց պատմութիւնը ասում է, որ այդ ջրհորը, որ առաջ ջուր էր մատակարարում միջնաբերդին ճախարակներով, ստացել է այդ անունը միջնաբերդը շինող Իւսուֆ սուլթանից: Ջրհորը բաւական խոր է և մարդու գլուխը պտրտվում է ներքև նայելիս: Այդտեղ էին

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԱՑ ՄԱՄՈՒԼԻՑ

Թէ ինչ ծիծաղելի հետևանքների է հանում այն հանգամանքը, որ Կովկասի երկու ամենամեծ և ամենահին ազգերը՝ հայերն ու վրացիները՝ համարեա թէ ամենեին միմեանց մօտիկ չեն ճանաչում, երևում է այն տարօրինակ տեղեկութիւններից, որ յաճախ տալիս է վրաց մամուլը հայերի մասին իր ընթերցողներին:

Անթիւ փաստերից յիշատակենք առ այժմ ամենաթարմը: «Իվերիան» մի ընդարձակ առաջնորդողով հրաւիրում է վրաց ժողովրդին ձեռք վերցնել քելեխի և սգի համար ծախսեր անելու սովորութիւնից և այդ՝ իբրև տեղը վատնվող գումարը ազգային գործերին յատկացնել: Լրագրի կարծիքով ամբողջ Վրաստանում տարեկան մօտ 50,000 ռուբլի փող է կորչում այդ աւելորդ ծախսերի համար, մի գումար, որ, ի հարկէ, մեծ ծառայութիւն կը մատուցանէր, եթէ նուիրվէր ազգային հիմնարկութիւններին: Եւ իր այդ բարի խորհրդի հետ վրաց լրագիրը հարկաւոր է համարում տալ մեր հիւսուրց հարևաններին այսպիսի մի կենդանի օրինակ:

«Հայոց բարձր հոգևորականութիւնը,—ասում է նա—երկար ժամանակից ի վեր այդ բանի վրա ուշադրութիւն է դարձրել և ելնելով թէ չորս տարի սրանից առաջ տեղական հոգևորականութիւնը հրաման ստացաւ խիստ կերպով արգելելու քելեխ սարքելը. հասարակութիւնը պէտք է այդ փողը յոգուտ եկեղեցու նուիրէր: Հայոց հոգևորականութիւնը այն ատիճան եռանդոտ կերպով ձեռք դարկեց իր բարձր իշխանութիւնից եկած այդ կարգադրութեան, որ մինչև անգամ լուրեր տարածվեցին, թէ քահանաները չեն թողում այն ննջեցեալներին, որոնց ազգականները քելեխ են սարքում և եկեղեցուն չեն նուիրում քելեխի և սգի համար նշանակված փողերը: Չը գիտենք թէ որքան ճիշդ էին այդ լուրերը, բայց դրանք բաւական ազդեցութիւն ունեցան և ննջեցեալներին անթաղ թողնելու վախը սաստիկ թուլացրեց՝ գոնէ առաջին տարին՝ հին «ադաթի» և ծէսի ոյժը:

«Այդ կարգադրութեան պէտք է վերագրել այն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՑԼԵՐ ԿԱՊՐԻՎԻԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ինչպէս գրում է «Գերմանիայի Ազգային Թղթակցութիւնը», Կանցլեր կապրիվիի հրաժարականը ամենամեծ զարմանք է պատճառել ամենուրեք: Ինչպէս գրում է նոյն թերթը, Կանցլերը ինքը ոչ մի դիտողութիւն չունի անելու, ոչ մի գանգատ չունի, ոչ մի բողոք չունի, ոչ մի դատողութիւն չունի

հանգամանքը, որ հայոց հոգևորականութիւնը, որին պետութիւնից ամենին ոռճիկ չէ տրվում, չատ ուժեղ է նիւթական կողմից, պահում է իր ծախսով մեծ քանակութեամբ ուսումնարաններ և հոգում իր հօտի լուսաւորութեան մասին։ Նոյն կարգադրութիւնն էր պատճառը, որ այն փոքր, որ իզուր տեղը ծախսվում էր և քամուն տրվում, հասարակական կարիքներին պէտք եղաւ, հասարակական բարօրութեան հիմք դարձաւ։»

Վրաց լրագրի այդ հրաշալի երգներից յետոյ, խիստ հետաքրքիր է իմանալ, թէ ով աւելի ճիշդ տեղեկութիւն կունենայ հայոց գործերից,—եպօնային, թէ վրացին։

§ Փիրումեանց

ՈՒՂԵՑՈՅՑԻ ՊԱՀԱՆՋԸ

Մեր եկեղեցական-ծխական ուսումնարաններում Աղայեանի և Տէր-Ղևոնդեանի դասագրքերն են, որ ամենից չատ տարածված են։ Այս հանգամանքը փայլուն ապացոյց է, որ այդ դասագրքերը եղածների մէջ ամենից աջողվածներն են։ Բայց չը նայելով այս բացարձակ առաւելութեանը, մենք վատահանում ենք յայտնել մի արդարացի նկատողութիւն նրանց մասին. դա՝ ուղեցոյցի բացակայութիւնն է, որը ընդհանուր է մեր բոլոր դասագրքերի համար։ Բացառութիւն են կազմում Բահաթրեանի և Սահակ քահանայի ուղեցոյցները. բայց առաջինի դասագիրքը գրեթէ չէ գործածվում, իսկ երկրորդի ուղեցոյցը, չը նայելով որ բառացի թարգմանութիւն է գերմաներէնից, իր բարձր գնի պատճառով չէ տարածվում մեր մէջ։

Ընդհանրապէս ուղեցոյցի կարիքը զգալի է հետևեալ պատճառներով. 1) Մեր գիւղական ուսումնարաններում, ուր դասատուն կամ միայնակ է և կամ միայն առաջերէնի դասատութիւն չէ անում, ուսուցիչներն իրանց աւանդելիքը լինքնօգնութեամբ մշակելու միջոց չունեն,—նրանց պակասում է թէ ժամանակը և թէ պատրաստութիւնը։

2) Քաղաքի ուսումնարաններում երկու կամ երեք առարկայի դասատուն՝ վեց կամ ինը դասագրքի հետ է գործ ունենում, եթէ միայն երեք բաժանմունքի ուսուցիչ է. իսկ այնուհետև որքան բաժանմունք աւելանում է, նոյնքան անդամ երկու կամ երեք դասագիրք աւելանում է։ Բացի դրանից, նոյն իսկ մի առարկայի ուսուցիչը, օրինակ հայերէնի, դժուարանում է նիւթը մշակել, եթէ մինչև անդամ պատրաստութիւն ունի այդ անելու, որովհետև դասագրքերը տարբեր հեղինակների գործեր են, իսկ վերջիններիս տարբեր մեթոդն ու նիւթի տարբեր դասաւորութիւնը բարդում են դասատուի գործը, առաջացնում են նիւթի և դասընթացների խառնակութիւն, օրինակ գրաբարի և աշխարհաբարի ուսուցումը, նրանց երկուսի քերականութիւնները և ուղղագրութիւնները և այլն։

3) Մեր հարուստ քաղաքների ուսումնարաններում հաղիւ են պատահում, որ սաացվեն մանկավարժական ամսագրեր կամ ժողովածուներ, որոնցից դասատուն կարողանար օգտվել ուղեցոյցի փոխարէն։

Ահա այդ դժուարութիւններն անհամեմատ կարող է թեթևացնել ուղեցոյցը, ներկայացնելով ուսուցչին հաստատուն, ծրագրած, հետևողական մեթոդով դասաւանդական ընթացք։

Սակայն ուղեցոյցները մի ուրիշ չարիքի առաջ ևս պէտք է առնեն։ Ցայտնի է թէ որքան հեշտացել է մեր մէջ դասագրքեր «թխելը» և նրանց «օգօբրիտ» անել տալը։ Մեր կարծիքով, որքան այդ բոլորը հեշտ է, նոյնքան դժուար է ուղեցոյցի մէջ աչքակապութիւն անելը. այստեղ դասագրքի հեղինակը ինքն, իր գիրքը քննելով, պէտք է գլուխութիւններ ներկայացնէ աւանդող ուսուցչին և այսպիսով մերկանում է նա իր ունեցած չունեցածով. իսկ այս հանգամանքը թէ ուսուցչի և թէ նոյն իսկ «օգօբրիտ» անող յանձնաժողովի առաջ մի անաչառ քննութիւն պէտք է հանդիսանայ։

Այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, ուղեցոյցի կարիքն անհրաժեշտ է դառնում և կարծում ենք, որ վերևում յիշած երեք պատճառներն են, որ հիմք են ծառայում մեր դրացի ուսումնարանների մէջ գործածվող՝ մեծ խնամքով մշակած, մանկավարժական հիմունքներով կազմած ուղեցոյցներին, որոնցով անհամեմատ հեշտանում է մանաւանդ գիւղական ուսուցիչների գործը, երբ ամբողջ ընթացքը միայն մի դասատուի վրա է բարդվում։

Ահա այս հիմունքներով մենք կարծում ենք, որ Աղայեանի և Տէր-Ղևոնդեանի դասագրքերը իրանց աջող ընդունելութեան վրա պէտք է աւելացնեն և մի լաւ գործ, եթէ նրանք ունենան իրանց հետ օժանդակիչ մաս, ուղեցոյց։ Նոյնը կարող ենք ասել առհասարակ բոլոր դասագրքերի մասին։

Գր. Տէր-Պող.

ՆԱՄԱԿ ՆԵՐԲԻՆ-ԱԽՏԱՑԻՑ

Հոկտեմբերի 18-ին

Ամսիս 17-ին, առաւօտեան 8 ժամին, հրապարակական մաղթանք կատարվեց Թագաւոր Կայսրի առողջութեան համար։ Հայ քահանաների կատարած մաղթանքին ներկայ էին զինուորական ատեանի նախագահը՝ միւս բոլոր ատիճանաւորների և ծառայողների հետ միասին, Ծաղկաձորի շրջանի գիւղական հասարակութիւնների ներկայացուցիչները և ժողովրդի խուռն բազմութիւն։

Զինուորական ատեանը ամսիս 15-ին բացեց իր նիստը և հրաւիրեց նորակոչներին դէպի վիճակահանութիւն։ Նշանակված օրից դեռ երեք օր առաջ՝ Ծաղկաձորի գաւառակի 30 գիւղերի քրիստոնեայ ազգաբնակութիւնից հազարաւոր մարդիկ՝ նորակոչների հետ միասին՝ հաւաքվել էին այստեղի հաշտատար դատարանի արքունական շէնքի հանդէպ, ուր կատարվեց վիճակահանութիւնը։ Նոր Բայազէտի գաւառապետ Ֆօրտէն, որ նախագահում էր ատեանում, նախ և առաջ առաջարկեց հայ քահանաներին մաղթանք կատարել, որը տեղի ունեցաւ անմիջապէս։ Հրապարակական ժամասացութիւնից յետոյ՝ ատեանը վիճակի կանչեց առաջ ռուս զինուորացուներին, որոնք թւով 21 հոգի էին և որոնց թւում կային թէ Երևանի և թէ Նախիջևանի կողմերից եկածներ, և ապա հայերին։ Վիճակահանութեանը ենթարկվեցին 257 հոգի հայ նորակոչներ, որոնցից ատեանը իսկական զինուոր վերցրեց 27 հոգի։

Զը նայելով, որ այժմ մեր գիւղական ժողովրդի մէջ չէ նկատվում զինուորագրական առաջին տարիներում տեղի ունեցած լայ ու կոծը, տրտունջը՝ զինուորներ ունենալու վերաբերմամբ, չը նայելով որ այժմ, նոյն իսկ իրանք զինուորացու երիտասարդները ընտելացել են ամենայն հաճութեամբ և ուրախ սրտով դիմել դէպի վիճակահանութիւն,—սակայն տխուր է արձանագրել այն հանգամանքը, որ հայ զինուորներից չատերը ամուսնացած են և մինչև անգամ զաւակների տէր... Կան մինչև անդամ նոր ապակներ, որոնք մտնելով ծառայութեան մէջ՝ ստիպված են լինում 3 – 4 տարի թողնել իրանց նորատի ամուսիններին լացի և կսկծի մէջ... Մթթէ չէր կարելի, որ զինուորացու երիտասարդներ ունեցող ծնողները չը շտապէին օր առաջ ամուսնացնել իրանց զաւակներին, և սպասէին մինչև որ նրանք ազատվէին զինուորութիւնից։

Փակելով իր նիստը Ներքին Ախտայում՝ յիշեալ ատեանը երկու օրից յետոյ գնալու է Նոր-Բայազէտ՝ շարունակելու իր գործունէութիւնը այդ գաւառում։

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրօպոլ, սեպտեմբերի 20-ին

Վերջերքս, երբ իմ «Հայոց պարբերական մամուլը» խորագրով աշխատութիւնը Կոստանդնուպօլսում Սահակ-Մեսրովպեան մրցանակաբաշխութեան մանաժողովի կողմից 20 ոսկի պարգևի արժանացաւ, «Մշակի» մէջ՝ իմ երկի վերաբերեալ տպագրվեցին երկու յօդուած, որոնց նոյն ուղղութեամբ և նոյն յարձակողական ոճով գրված լինելը ցոյց է տալիս, որ երկուսն էլ մի գրչի (?!) արդիւնք են, և նպատակն է եղել իմ գրքի վարկը ձգել ընթերցող հասարակութեան առաջ։ Դրանցից մէկն է «Մշակի» 84-դ համարում տպված «Մրցանակաբաշխութիւն թէ ծաղրաբանութիւն» խորագրով յօդուածը, իսկ միւսը № 102-ի մէջ տպած Կարսից նամակը, Աբէլ Ապրեսեանի ստորագրութեամբ։ Թողնելով առաջին յօդուածի մասին խօսելը մի ուրիշ անգամի, մի քանի խօսք կասենք վերջին նամակի վերաբերմամբ, որ լի է յարձակումներով։

Պարոնը «չուարած» է մնացել տեսնելով իմ արած «խոշոր» սխալները, և ինձ վրա յարձակվելով, աշխատութիւնս էլ, որ Սահակ-Մեսրովպեան այս տարվայ մրցանակաբաշխութեան մէջ առաջնակարգ տեղն է բռնել, երևայ ականթոթովանք, բազմաթիւ և ծիծաղելի սխալներով լի, յիմար, կատարեալ այլանդակ է հրատարակել։

Յօդուածագիրը երկու օրինակ է բերում իմ դեռ լոյս չը տեսած գրքից, նկատելով թէ պէտք է որ ես իմ գրքի մէջ յիշէի Գրիգոր Արծրունու 25-ամեայ յոբելեանը և փառաւոր թաղումը։ Այստեղ զրպարտութեան չափը ծայրայեղութեան է հասնում։ Ինչ որ հարկաւոր էր Արծրունու յոբելեանի և թաղման մասին ասել, գրված է արդէն իմ գրքում. իսկ մամուլի պատմութեան մէջ հօ չէր կարելի յիշել մանրամասն թէ հանգուցեալ Արծրունու պակները որտեղերից էին ստացված, կամ թէ յուղարկաւորութեան ժամանակ ինչ պատահեց և այլն։

Պ. Ապրեսեանի եզրակացութիւնն այն է, որ Կ. Պոլսում, հայ լրագրութեան մասին՝ պատրիարքարանը, Սահակ-Մեսրովպեան մանաժողովը՝ Գ. Նորատունկեան, Յովհաննէս ք. Մկրեան և ուրիշները, ինչպէս և քննիչները՝ Կ. Իսթիճեան, Մ. Աղաբէգեան այնքան բան չը գիտեն, ինչքան որ ինքը։ Պ. Ապրէսեան, թոյլ տուէք մեզ ասել, որ ձեր նպատակը չէ եղել գիրք քննելը։ Ձեր նպատակն է ինձ բանակռիւ կանչել, յարձակվել, հալածել, իբր թէ ծիծաղելի անել աշխատութիւնս, որը չէ աջողվում ձեզ։ Գրքիս նիւթը հետաքրքիր է և, հակառակ ձեր ցանկութեան, լուրջ, ճշդիւ, և որ գլխաւորն է՝ անկողմնապահ գրված։ Համբերութիւն ունեցէք. մի ամսից յետոյ լոյս կը տեսնի, տեսէք և համեմատեցէք իմ «Խակ», «Յիմար» գրուածքը հ. Գալէմքեարեանի «Հասուն, իմաստուն» հրատարակութեան հետ, ապա անկեղծ կերպով դուք ձեզ հաշիւ տուէք։

Յ. Գ. Խնդրում եմ մեր մամուլ օրաթերթերին արտատպել իմ այս նամակը։

Գարեգին Ջիւանի Լեւոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 24-ին, երկուշաբթի երեկոյեան, կայացաւ Թիֆլիսի դումայի ձայնաւորների նիստը։ Այդ նիստում նախ հոգեհանգիստ կատարվեց ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III Կայսրի համար, ապա մաղթանք կատարվեց գահը բարձրացած Ներին Կայսերական Մեծութիւն Նիկոլայ II Կայսրի բարեկեցութեան համար, որից յետոյ ձայնաւորները և քաղաքային վարչութեան մէջ բոլոր ծառայողները երդում տուեցին։

գտնվում և Սալահդինի պալատի աւերակները։

Իջնելով միջնաբերդից քաղաքը, և այցելելով Էլ-Հէքիմ խալիֆայի մզկիթը, որ վերածված է արաբական միջնադարեան հնութիւնները պարունակող թանգարանի և որը հիմնվել է անգլիական հիւպատոս Թօջէրսթէրի, գերմանացի Ֆրանց-փաշայի և հայ Յարութիւն փաշայի ջանքերով, Խմայիլ Խէդիվի ժամանակ, մեզ առաջնորդեցին դէպի Նեղոսի կամուրջը, որից անցնելով, պէտք է այցելէինք Խիզէի հռչակաւոր պալատը և նրա մէջ գետնդված մուզէոնը, որ այժմ ամբողջ աշխարհում իր տեսակի մէջ առաջինն է համարվում։

Անցնելով Նեղոսի վրա ձգած կամուրջից, որ մի հոյակապ շինութիւն է և բաղկացած է չղթաներով միացող երկու շարժական մասերից, ունենալով ծայրերին երկու երկու սֆինքսներ, իբրև պահապաններ, մենք հասանք մի փոքրիկ կղզի, որտեղից սկսվում էր արմաւենիներով և տրօպիական ակացիաներով մի գեղեցիկ ծառուղի, որ մեզ տարաւ ուղղակի դէպի Գիզէի կամ Խիզէի պալատը։

Մեր առաջ ներկայացաւ մի լայնատարած շինութիւն, բարձր ոլորերով։ Մտնելով երկփեղկեան մեծ դռնից մի ահագին և հրաշալի պարտիզի մէջ, առաջին բանը, որ մեր աչքին ընկաւ—մի պարզ, բայց գեղարուեստական և վեմ սիլով շինված շիրիմ էր, որի վրա քանդակված էին «այստեղ հանգստանում է Աւգուստ Ֆէրդինանդ Մարիէթ 1821—1880» խօսքերը։—Այս՝ մուզէոնը ստեղծողի դամբարանն է, ասեցին մեզ մեր առաջնորդները։

Անկարելի է մեզ նկարագրել Գիզէ պալատի գեղեցկութիւնը, շքեղութիւնը և մանաւանդ ճարտարապետութեան հիանալի տեսքը։ Թէև եւրօպական և մաւրիտանական ոճերը խառնված են միմեանց հետ, բայց ընդհանուր տպաւորութիւնը վերին աստիճանի աքանչելի է։ Գիզէի պալատը շինել է տուել այժմեան խեդիվ Աբաս-փաշայի պապը, Խմայիլ փաշան, և ինչպէս երևում է, միլիոններ չէ խնայել մի այնպիսի պալատ ստեղծելու, որի նմանը արևելքի վեհապետները դժուար թէ ունենային։ Պալատի այն մասը, որ յատկացրած է հարէմին, այնքան ընդարձակ է, որ կարող է մինչև 300 գեղեցկուհիներ պարունակել իրանց նամիչներով։ Ասում են, որ Խմայիլ փաշան հէնց 300 գեղեցկուհիների համար և յատկացրել է այդ մասը։

Ամբողջ պալատը բաղկացած է մի քանի պալացօներից. կայ մի առանձին մաս, որ յատկացրած է պալատական խնճոյքների համար. մի ուրիշ մաս յատկացրած է պաշտօնական ընդունելութիւնների համար և ամենաճոխ կերպով զարդարված ու պճնված է. այդտեղ կան 10 հազար ռուբլի արժեցող հայելիներ, թանգագին մոզայիկ սեղաններ, մալախիտ սիւներ և այլն։

Պարահանդէսի համար յատկացրած դահլիճը իր անթիւ բիւրեղեայ ջահերով կարող է մինչև հազար մարդ պարունակել։ Ամեն մի մանրամունր բանի մէջ նկատվում է շքեղութիւն, շռայլութիւն, իսկ մանր-մունր բաներ պալատի 91 սրահների մէջ անթիւ և անհամար են։

Խիզէի պալատը ունի միայն 91 դահլիճներ, բայց այդ դահլիճների մէջ այսօր այլ ևս չեն բընակվում և զուարճանում արքունիները և 300 գեղեցկուհիները, այլ նրանց մէջ այսօր զետեղված և դասաւորված են այն բոլոր կոթողները, որոնք մնացել են հին Եգիպտոսի փառքից և մեծութիւնից և որոնք ցոյց են տալիս 6000 տարի առաջ գոյութիւն ունեցող մի ինքնուրոյն կուլտուրայի նշանները։

Այդ 91 դահլիճները պարունակում են այն բոլոր հնութիւնները, որ այսօր ժառանգում է Եգիպտոսը։ Այդ 91 գալէրէաները, իբրև եգիպտոլոգիայի ցուցահանդէս, աշխարհիս ամենահարուստ և ամենաճոխ թանգարանն են կազմում։ Նրանք հիանալի կերպով ցոյց են տալիս փարաւոնական քաղաքակրթութիւնը իր բոլոր մանրամասնութիւնների մէջ և այցելուների առաջ պարզում են Նեղոսի հովտի բնակիչների արուեստագիտական ղղացմունքների բոլոր արտայայտութիւնները՝ սկսած հին կայսրութեան արձաններից և ալքայական շիրիմներից, մինչև քրիստոնեայ ղպտացիների—հին եգիպտացիների շառաւիղը համարվող միակ մնացորդի—գործերը։

Ով այցելել է Խիզէի մուզէոնը, որ բացվել է 1892 թւին և պիրամիդները, նա հաստատապէս կարող է մի ամփոփ դաղափար կազմել նախկին Եգիպտոսի քաղաքակրթական վիճակի մասին։ Այդ է պատճառը, որ այժմ իւրաքանչիւր ձմեռ տասնեակ հազարներով այցելուներ թափվում են Կայիրէ՝ Եւրոպայից, Ամերիկայից յատկապէս Խիզէի մուզէոնն այցելելու և այցելելով, այլ ևս հարկաւոր չեն համարում գնալ տեսնել հին աւերակ քաղաքները, բացի պիրամիդներից, որոնք Խիզէի մուզէօնից չատ էլ հեռու չեն։

Բայց որպէս զի ուղեորները իմանան, թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ պալատի այդ մեծ կերպարանափոխութիւնը, երբ նա հարէմական կեանքի համար ստեղծված ապարանքից վերածվեց գիտութեան մի հոյակապ տաճարի և ինչպէս ստեղծվեց աշխարհիս ամենանշանաւոր և մեծ թանգարանը, Գիզէի մուզէօնի վարչութիւնը հրատարակել է 1892 թւին Կաիրօի ազգային տպարանում մի ընդարձակ տեղեկագիր, որ պարունակում է այդ թանգարանի պատմութիւնը և նրա մէջ ցոյց տրված հազարաւոր կոթողների, արձանների, մումիաների, ոսկեայ, արծաթեայ և այլ իրերի ցուցակը։ Առանց այդ ցուցակի անհնարին է այդ 91 ահագին դահլիճների լաբիւրինթոսի մէջ դլուխ հանել։

Մենք կը նկարագրենք մուզէօնը և կը ծանօթացնենք ընթերցողներին նրա պատմութեան հետ այդ ցուցակի համաձայն։

(Կը շարունակվի)

Ապա Թիֆլիսի քաղաքագլուխը առաջարկեց խորհրդին առկանել առ Գահոյս Նորին Կայսերական Մեծութեան Թիֆլիսի քաղաքի ամենահպատակ զգացմունքները Նիկոլայ II Կայսրի գահ բարձրանալու առիթով և քաղաքի ամբողջ ազգաբնակութեան ամենախորին վշտի զգացմունքը այն մեծ կորստի պատճառով, որին ենթարկվեց հայրենիքը: Այդ առաջարկութիւնը ձայնաւորները միաձայն ընդունեցին և որոշեցին փակել նիստը:

—

Հոկտեմբերի 24-ին հաւատարմութեան երդում տուեցին կառավարչական և հասարակական բոլոր հիմնարկութիւնների ծառայողները: Կիրակի, հոկտեմբերի 23-ին, երդում տուեցին Թիֆլիսի բոլոր տանտէրերը, զինուորական և քաղաքացիական ծառայութեան մէջ գտնվող բոլոր հրէաները և ուրիշները: Բացի դրանից ուղղափառ և լուսաւորչական, կաթոլիկ և լութերական եկեղեցիներում ու հրէական սինագոգներում հոկտեմբերի 21-ից ժողովուրդը երդում է տալիս:

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Պատրիարքարանի մէջ այժմ առանձին եռանդով կաշխատեն, որպէս զի լրագիրները կաշառեն և գովեստներ տպագրեն տան: Հմայակ եպիսկոպոսը այդ բանին մեծ նշանակութիւն կը տայ և ոչինչ միջոց չի խնայիր՝ որպէս զի մի քանի վարձկան թղթակիցներ ունենայ իր օգտին: Արդէն այստեղի լրագիրներին թոյլ չի տրվիր քննադատել, իսկ դուրսը, կրսեն, արդէն աջողած են մի քանի լրագիրներու՝ գովասանական լեզու գործ ածել տալ տեղապահի օգտին»:

—

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Նահապետ վարդապետ Նահապետեան ուղևորվել է Շուշի՝ որպէս զի հրաժարված հոգաբարձութեան տեղ նոր հոգաբարձուներ նշանակի, և նոր խումբ կազմի: Մենք հրաժարվում ենք հաւատալ այդ լուրին: Դպրոցի կանոնադրութեան և Պոլոժենիէյի հիման վրա՝ թեմական դպրոցի հոգաբարձութիւն ընտրվում է ժողովրդից, և ոչ ոք չէ կարող հոգաբարձուներ նշանակել: Քանի դպրութիւն ունի կանոնադրութիւնը և քանի այդ կանոնադրութիւնը չէ փոխված, հին հոգաբարձուների հրաժարվելուց յետոյ պէտք է ձեռնարկել անմիջապէս նոր հոգաբարձուների ընտրութեան գործին: Ուրիշ ճանապարհ չը կայ: Այդ է միակ օրինական ճանապարհը:

—

Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխը, «Нов. Обозр.» լրագրի խոսքով, միջնորդում է՝ թոյլ տալ ազնուականութեանը մի պատգամաւորութիւն ուղարկել ի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի հանդիսաւոր թաղմանը:

—

Մենք ստացանք Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան մի նոր հրատարակութիւնը «Շիլիոնի կալանաւորը» վերնագրով, հեղինակութիւ Մօրից Հարտմանի, թարգմանութիւն ռուսերէնից Կ. Գիւլնազարեանի: Դա մի պատմական վէպ է, որ նկարագրում է այն դիւցազնական կռիւը, որ 16-րդ դարում մղում էր Շվեյցարիայի ժընեվի նահանգը կաթոլիկ հոգևորականութեան և գերմանական տիրապետութեան դէմ՝ իր քաղաքական անկախութեան և խղճմտանքի ազատութեան համար: Վէպի հերոսն է Բոնիվարը, որ բանտարկված է Շիլիոնի բերդում և որի անունով նրա կողմնակիցները մղում են պատերազմը, մինչև որ նա ազատութիւն է գտնում և անցնում գործի գլուխը: Անկասկած ընթերցողները զուարճութիւն կը զգան կարդալով այդ գեղեցիկ վէպը, մանաւանդ որ հայերէն թարգմանութիւնը կատարված է բաւական աջող կերպով: Գրքի գինն է 60 կոպէկ:

—

Սանիտարական տեսուչ բժիշկ Ստեփանեանի կարգադրութեամբ, քաղաքային բժիշկ Բէխտալամէր Կուր գետի ջուրը քննութեան ենթարկեց և հոկտեմբերի 24-ին մի զեկուցում ներկայացրեց սանիտարական տեսչին, որից երևում է, որ հոկտեմբերի 16-ին Կուր գետից վերցրած ջուրը՝ պոլիցական 7-րդ քաղաքամասի մօտ, որը ներկայ տարվայ խոլերային բռնն է, պարունակում է իր մէջ խոլերային բացիլներ: Իր փորձերը, մանրամասն զեկուցման հետ միասին, բժիշկ Բէխտալամէր ներկայացրեց Կայսերական Կովկասեան Բժշկական ընկերութեան: Մտադրութիւն կայ Կուրի ջուրը հետազոտել այն տեղերում, ուր ջրանցքի չինութիւններն են գտնվում, այն է Ա-ճալի մօտ:

—

Մեզ հաղորդում են, որ Կայսրերի խնամատար ընկերութեան աչքարուժական բաժանմունքի մէջ յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների ընթացքում՝ ընդունվել են նոր հիւանդներ 1181 հոգի. այդ հիւանդները, հների հետ միասին, այցելել են 9510 անգամ: Կատարվել է 165 օպերացիա:

—

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսում հոկտեմբերի 20-ին ասիական խոլերայից մեռաւ Անաստասիա Զօզիտով կինը, 7-րդ քաղաքամասում: Հոկտեմբերի 20 ին 5-րդ քաղաքամասում խոլերայից մեռաւ Սոֆիա անունով մի մուրացկան կին: Հոկտեմբերի 23-ին 8-րդ քաղաքամասում խոլերայով հիւանդացան Նինա և Սիրանոյշ փոքրիկ աղջիկները, որոնցից երկրորդը մեռաւ հետեւեալ օրը, հոկտեմբերի 24-ին: Հոկտեմբերի 25-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցն է տարված Օրթաճալայում խոլերայով հիւանդացած այգեպան Սաֆրոն Կաղջայա: Նոյն հիւանդանոցում գըտնվող Ցակոբ Գէորգով և Եղիսաբէթ Գրիգուրով խոլերայով հիւանդները առողջանում են:

—

Մայրաքաղաքի լրագիրների խոսքերով, հարց է յայտնված առևտրի մէջ զեղծումներ անելու համար նոյնպիսի պատիժներ սահմանել, որպիսի պատիժներ սահմանված են ակցիզային կանոնադրութեամբ:

—

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, Թիֆլիսի գաւառի Փոքր Լիլո գիւղում ասիական խոլերա է երևացել: Այս օրերս այնտեղ խոլերայից մեռել է չորս հոգուց բաղկացած մէկ ամբողջ ընտանիք: Խոլերայի տարածման դէմ միջոցներ են ձեռք առնված:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 21-ից. «Այսօր, Թագաւոր Կայսրի մահվան պատճառով, բոլոր խանութները փակված էին և հոգեհանգիստներ կատարվեցին եկեղեցիներում և մզկիթներում: Իսկ ժամը 1-ին, Նորին Մեծութեան Նիկոլայ Կայսրի գահակալութեան առիթով, հաւատարմութեան երդում տուեցին՝ հայերը ս. Սարգիս մայր-եկեղեցում, զօրքը և ռուսները՝ ռուսաց եկեղեցում, թուրքերը՝ իրանց մզկիթներում»:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Ճեմարանի տեսուչ Կոստանեանցը հետեւեալ նոր կարգադրութիւններն է մտցրել ճեմարանում: Ստորին դասարանները վերին դասարանների հետ հաղորդակցութիւն չը պէտք է ունենան, իսկ վերջիններն էլ լսարանների հետ չը պէտք է կապվեն: Երրորդ դասարանը կարող է խոսել միայն չորրորդի հետ և հինգերորդը վեցերորդի հետ: Ցայտարարված է աշակերտներին, որ այդ հրամանին հակառակ վարվողները անմիջապէս պէտք է արձակվեն»:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Այստեղ հասարակութիւնը անհամբեր սպասում է թէ Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը ինչ պատիժ կը նշանակի եղիշէ քահանայ Գեղամեանին, որը պակել է 9 տարեկան աղջիկ: Այդ գործը, ինչպէս լսում ենք, քննութեան է առնվել ոչ թէ միայն հոգևոր իշխանութեան, այլ նոյն իսկ պրոկուրորական իշխանութեան կողմից»:

—

ՊԵԱՏԻԳՈՐՍԿԻՑ մեզ գրում են. «Նորերս այստեղ կայացան հոգաբարձական ընտրութիւններ տեղիս միդասեան ծխական երկսեռ դպրոցների համար: Հասարակութեան միահամուռ ցանկութեամբ հոգաբարձու ընտրվեց Ղազարոս Սվէշնիկեանց, իսկ նրա անձնափոխանորդ՝ Կարապետ Շահլամեանց: Դրանցից առաջինը Պեատիգորսկի հայերի շրջանում վաղուց ճանաչված է իբրև եռանդուն ու օգտաւէտ գործող, իսկ երկրորդը դեռ նոր մարդ է հասարակական ասպարիզում: Շատ ցանկալի է, որ նորընտիր պարոնները այժմեան երէցփոխ ու հոգաբարձու Բաղդասար Խաչատրեանի հետ ձեռք ձեռքի տուած աշխատէին նիւթապէս ապահովել և երկդասեան դարձնել դպրոցը, որի երկյարկանի դեղեցիկ շինութեամբ Պեատիգորսկի հայերը քիչ չեն պարծենում օտարների առաջ: Հոգաբարձունների վրա կայ և մի ուրիշ պարտք, պէտք է հէնց հիմիկվանից աշխատել հարստացնել դպրոցի դրամարանը, որից այժմս էլ, բացի տեղացիներից, մեծ օգուտ են քաղում ամառը հանքային ջրերում բժշկվող հայ հիւանդները»:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Վանքի դրութիւնը տնտեսական կողմից աննախանձելի է: Նոյն իսկ ընթացիկ մանր ծախսերի համար փող չը կայ: Մտադրված փոխառութիւնը դեռ չէ կայացել, և այդ պատճառով փողի մեծ պակասութիւն է զգացվում»:

—

ԲԱԳՈՒԻՑ «Кавказъ» լրագրին հեռագրում են հոկտեմբերի 24-ին հետեւեալը. «Այսօր, երեկոյեան 7½ ժամին, բացվեց Նաւթարդիւնաբերողների IX հերթական ժողովը: Զայնի իրաւունքով մասնակցողները 45 հոգի են: Բաղմաթիւ են հիւրերը: Մինիստրի հրամանով ժողովի պրոգրամի մէջ մտած է Բաքուում և Բաթումում առանձին նաւթային բորսա հիմնելու հարցը»:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղացիներից մէկը, Խաթունեանց անունով, իր օրինաւոր ամուսին Սիմէ Գալստեանին մի քանի տարի առաջ արտաքսել էր և դեռ գործը չը վերջացրած՝ մէկ ուրիշի հետ պսակվել: Սիմէն, ապրելով իր հօրեղբօր տանը՝ մեծ ծանրութիւն էր պատճառում իր ամուսնուն՝ նրանից ստանալով իր ապրուստի գինը: Վերջապէս մեռաւ և Սիմէի միակ հովանաւորը՝ հօրեղբայրը:—Այս ամսի 2-ին երկու այրի կանայք Սիմէին իրանց հետ տանում են այգին լուացք անելու, բայց երեկոյեան Սիմէն այլ ևս յետ չէ դառնում: Միւս օրը երկու հոգի շատ որոնելուց յետոյ գտնում են Սիմէի դիակը՝ մի այգու մօտ՝ չոր չոփով ծածկված: Շինական տանուտէրի արած հարց ու փորձից այն կարծիքն է կազմվել, որ իբր թէ յիշեալ Խաթունեանցն է կաշառել այդ կանանց, և իբրև թէ դրանք էլ խեղդել են Սիմէին: Անկասկած խիստ և օրինաւոր քննութիւնը կը բանայ այդ սպանութեան գաղտնիքը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՑԼԷՐ ԿԱՊՐԻՎԻԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—

Մեր ընթերցողներին արդէն յայտնի է Հիւսիսային գործակալութեան հեռագրից, որ գերմանական կանցլէր Կապրիվի հրաժարական տուեց, և նոր կանցլէր նշանակվեց Էլզաս-Լոտարինգիայի փոխարքայ իշխան Հոհէնլոէ: Վերջին ժամանակներս գերմանական լրագիրները լուրեր էին հաղորդում կոմս Կապրիվիի հրաժարականի մասին, բայց ոչ ոք լուրջ կերպով չէր վերաբերվում այդ լուրերին, որովհետև չորս տարվայ ընթացքում Կապրիվի ոչ մի հրաժարական չը տուեց, չը նայելով որ լուրջ պատճառներ ունէր հրաժարական տալու: Ուրեմն ինչը ստիպեց այս անգամ չափաւոր և խաղաղ կանցլէրին հրաժարական տալ: Ահա այն հարցը, որ հետաքրքրում է ամենքին:

Մի քանի ամիս առաջ գերմանական կայսրը, կենիգսբէրգում գտնվելով, մի ճառով դիմեց ազնուականութեանը՝ խնդրելով օգնել իրան յեղափոխական կուսակցութիւնների դէմ մղած կռիւի մէջ: Թէ ումն ունէր աչքի առաջ կայսրը յեղափոխական կուսակցութիւնների անուան տակ, ճառից չէր երևում: Սակայն գերմանական պաշտօնական և կիսապաշտօնական լրագիրները այդ ժամանակից արդէն բացատրեցին, որ կայսրը աչքի առաջ ունէր անարխիստներին և սոցիալիստներին: Վերջին ժամանակներս նոյն լրագիրները յայտարարեցին, որ գերմանական կառավարութիւնը մտադրութիւն ունի մի նոր օրինագիծ առաջարկել ռէյխստագին սոցիալիստների դէմ: Ուրեմն բիսմարկեան փորձերն են ուզում կրկնել սոցիալիստների դէմ:

Գերմանական յետադէմ մամուլը և յետադէմ միջոցների կողմնակիցները, ի հարկէ, շատ գոհ են կառավարութեան այդ նոր ուղղութիւնից և իրանց յանդգնութիւնը այն տեղն են հասցրել, որ պահանջում են ոչ միայն սահմանափակել ժողովներ կազմելու և մամուլի ազատութեան իրաւունքները, այլ համարձակվում են գերմանական սահմանադրութեան հիմնական կէտին դիպչել, այն է ընդհանուր ձայնաւորութեան իրաւունքին: Եւ այդ յետադէմ ուղղութիւնն սկսվեց գերմանական կառավարութեան բարձր շրջաններում Կարնօի սպանութիւնից յետոյ:

Սակայն կոմս Կապրիվիին շատ լաւ յայտնի էր, որ Բիսմարկի կռիւը թէ սոցիալիստների դէմ և թէ կաթոլիկութեան դէմ ամենևին աջողութիւն չունէր: Յետադէմ և ճնշող միջոցների հետևանքն այն էր, որ սոցիալիստների կուսակցութիւնը ընդարձակվեց, զարգացաւ և աւելի սպառնալի դիրք բռնեց: Այդ բանը լաւ հասկանալով, կոմս Կապրիվի աշխատեց դիմադրել կայսրի և յետադէմ կուսակցութեան առաջարկած նոր օրինագծին, ապացուցանելով, որ դժուար է սահմանադրական երկրի պարլամենտին առաջարկել մի այդպիսի ամօթալի նախագիծ և պաշտպանել նրա հիմունքները: Կոմս Կապրիվիի կարծիքով, եղած օրէնսդրութիւնը շատ բաւական է երկրի մէջ կարգը և հանգստութիւնը պաշտպանելու համար: Ահա այդ ընդհարումն էր Կապրիվիի հրաժարականի պատճառը:

Կոմս Կապրիվի իր քառամեայ գործունէութեան ժամանակ կարողացաւ գրաւել Եւրոպայի վստահութիւնը: Նա չափաւոր և զսպող քաղաքականութեան ներկայացուցիչ էր: Նրա շնորհով դադարեց հալածանքը լեհացիների և սոցիալիստների դէմ, և հաշտութիւն կայացաւ կաթոլիկների հետ: Վերջապէս, իր հրաժարականով Կապրիվի հերքեց այն սխալ կարծիքը՝ թէ ինքը հլու-կատարող էր կայսրի հրամանների:

Գերմանական ներքին քաղաքականութիւնը սրանից յետոյ մեծ հետաքրքրութիւն է ստանում, որովհետև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը հանդիսատես է լինելու մի մեծ կռուի, որ տեղի է ունենալու առաջադիմական և յետադիմական ուղղութիւնների ներկայացուցիչների մէջ: Թէ որ ուղղութիւնը յաղթող կը հանդիսանայ,—այդ կը ցոյց տայ մօտիկ ապագան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կոմս Կապրիվի հետ միաժամանակ հրաժարական տուեց և պրուսական մինիստրների նախագահ ու ներքին գործերի մինիստր կոմս Էյլէնբուրգ: Կոմս Էյլէնբուրգի տեղ պրուսական մինիստր-նախագահ և մի նոյն ժամանակ ներքին գործերի մինիստր նշանակվեց Կէլլէր, որը իշխան Հոհէնլոհի աջ ձեռքն էր Էլզաս-Լոտարինգիայում: Կէլլէր ծնվել է 1840 թ-ին, այնպէս որ նա այժմ 54 տարեկան է: Նա պատկանում է պապանողական կուսակցութեան այն խմբին, որը մանաւանդ աչքի էր ընկնում իր պարլամենտական գործունէութեամբ: 1888 թ-ին Կէլլէր պատգամաւոր ընտրվեց Բէլիստագում: Որպէս պատգամաւոր նա մեծ եռանդով պաշտպանում էր զինուորական բիւջէտը Բիսմարքի և ուրիշ ազատամիտների յարձակումներից: Մի ժամանակ նա ոստիկանութեան նախագահ էր Ֆրանկֆուրտում Մայնի վրա, և յետոյ Էլզաս-Լոտարինգիայի ստատս-սեկրետար էր, ուր գործում էր իշխան Հոհէնլոհէի ազատամիտ ուղղութեան համաձայն:

—Լիլլից հաղորդում են, որ երկարատև յորդառատ անձրևների պատճառով Ֆրանսիայի Հիւսիսային և Պա դէ-Կալէ դէպարտամէնտները հեղեղված են. շատ քաղաքներ, գիւղեր և ագարակներ շրջապատված են ջրով: Մօտ 100,000 բանւորներ անգործ են մնացել:

—Հռոմից «Berl. Tageblatt» լրագրին հեռագրում են, որ հոկտեմբերի 16-ին (28-ին) կայացաւ կոնֆէրենցիայի երկրորդ նիստը պապի նախագահութեամբ՝ արևելեան եկեղեցիները միացնելու վերաբերմամբ: Այդ նիստի քննութեան առարկան էր՝ արևելեան պատրիարքների իշխանութեան ընդարձակելու հարցը: Հետևեալ նիստը տեղի կունենայ հոկտեմբերի 31-ին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերս Վիէննայում յանկարծամահ եղաւ աչքարոյժ Լուդվիգ Մաուանէր, որը մեծ հռչակ էր վայելում, որպէս յայտնի գիտական և գեղեցիկ օպէրատոր: Մաուանէր վախճանվեց 54 տարեկան:—Դեռ ուսանողական սեղանի վրա նա հռչակվեց իր գիտական հետազոտութիւններով, իսկ 1868 թուականից ամբողջ բժշկական աշխարհի ուշադրութիւնը գրաւեց իր վրա իր մի նշանաւոր գրուածքով: 1869 թ-ին նա պրոֆէսոր և աչքի կլինիկայի դիրեկտոր նշանակվեց Խնսբրուկում, որտեղից 1877 թ-ին տեղափոխվեց Վիէննա: Աշխարհիս ամեն ծայրերից հիւանդներ էին գնում Մաուանէրի մօտ բժշկվելու համար: Այս տարի

պրոֆէսոր Շոէլվագ, ծերութեան պատճառով հրամարական տուեց, և առաջարկեց իր տեղը նշանակել Մաուտնէրին, որին միաձայն ընտրեց համալսարանական ժողովը։ Վիէննայի պաշտօնական լրագրում Մաուտնէրի նշանակման հրամանը տպվելուց յետոյ, երկրորդ օրը, Մաուտնէր վախճանվեց... Թաղմանը ներկայ էին բժշկական աշխարհի աստղերը, իսկ դամբանականներ կարդացին բժշկական ֆակուլտէտի զլխան Վէյկսելբաում և պրոֆէսոր Բէյտ։

* * *

Ելանից, պ. Էմին Տէր Գրիգորեան ուղարկել է մեզ հետեւեալ նամակը. «Մշակի» № 119-ի մէջ Պաօշեանցի «Յուշիկների» առթիվ ի միջի այլոց գրված է. «Ինքնակենսագրութիւն գրելը այս վերջին ձեով բոլորովին նոր երեւոյթ է հանդիսանում մեր գրականութեան մէջ. այդ փորձի անհամեմատելի պատիւը պատկանում է մեր շնորհալի վիպագրող Ղազարոս Աղայեանցին, որի դափնիները, երեւի, հանգստութիւն չեն տուել Պերճ Պաօշեանցին»։ Այս նկատողութիւնը միանգամայն սխալ է ելքստ իս, անհրաժեշտ է ուղղել, որովհետ՝ այդ նոյն «Յուշիկները» Պաօշեանցը գրած ունէր դեռ 1884—85 թուերին. ես այդ յիշում եմ, որովհետև ես խնդրեցի այդ ժամանակ նրանից, որ թոյլ տայ ինձ տպագրութեամբ հրատարակել, բայց պայմանների մէջ չը հաշավեցինք և գործը յետաձգվեց մինչև այսօր։»

Մենք միանգամայն հաւատում ենք «Երեանի յայտարարութիւնների» նախկին խմբագրի խօսքերին։ Բայց աւելի վատ, եթէ Պաօշեան Աղայեանից չէ օրինակ վերցրել, այլ նրանից առաջ է գրել այդ անանախանձելի ինքնակենսագրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտեմբերի։ Այսօր մայրաքաղաքի լրագիրների խմբագիրների և հրատարակիչների ժողովում վճռվեց մի թանգագին պսակ դնել հանգուցեալ Թագաւոր Կայսրի դագաղի վրա։ Այդ վճիռը ի կատար ածելու համար չորս անձինք են ընտրված՝ Նոսովիչ, Սուվորին, Կսմարօլ և Գէզէլիուս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ Հանգուցեալ Թագաւոր Կայսրի մարմինը կը փոխադրվի Լիվադիայից Եալտա ձեռքերի վրա, Եալտայից մինչև Սեվաստոպոլ կը տանվի «Память Меркурія» կրէյսերի վրա, այդտեղից Պետերբուրգ—առանձին սգազգեաց գնացքով։ Դագաղի մէջ դնելուց յետոյ, մարմինը, կայսերական ծիրանի հագցրած, Թագաւոր Կայսրի և Կայսերական Ընտանիքի անդամների ձեռքով կը փոխադրվի Լիվադիայի մեծ եկեղեցին. գաւիթում կը դիմաւորի Ցարիզեան սրբազան արքեպիսկոպոսը՝ թեմական հոգեւորականութեան հետ միասին. եկեղեցու առաջ կանգնած կը լինի պատուաւոր պահնակ. օրը երկուանգամ հոգեհանգիստ կը կատարվի. որոշ ժամերին ամեն դասակարգի մարդիկ ներս կը թողնվեն՝ մարմնին երկրպագելու համար։ Դագաղը մինչև Եալտա կը տանեն Նորին Մեծութեան սեփական թիկնախմբի 16-րդ հրացանաձիգ գնդի զինուորները և Կայսրի նաւի թիավարները։ Երբ հանդէսը հասնի Եալտա, եկեղեցիներում կը սկսվի զանգահարութիւն, իսկ թնդանոթաձգութիւնը կը շարունակվի մինչև հոգեհանգստի վերջը։ Եալտայի նաւահանգստում կը կատարվի հոգեհանգիստ, որի վերջանալուց յետոյ դագաղը կը տեղափոխվի նաւը։ Նաւը կը մեկնի դէպի Սեվաստոպոլ՝ Նորին Մեծութեան իջեցրած զրօշակի ներքոյ, իսկ բէյդի վրա գտնվող նաւերի զրօշակները բարձրացնելուց յետոյ տեղի կունենայ կայսերական թնդանօթաձգութիւն։ «Պամյատ Մէրկուրի» նաւին կուղեկցեն «Ցասերկու Առաքեալներ» զրահակիր նաւը և կամաւոր նաւատորմի «Օրէօլ» շոգենաւը. Կրէյսերի հեռանալու ժամանակ, տեղի կունենայ սահմանված թնդանօթաձգութիւն։ Սեվաստոպոլի բէյդին մօտենալուց յետոյ, նաւատորմից և ամրոցներից տեղի կունենայ կայսերական թնդանօթաձգութիւն։ Երբ կրէյսերը, անցնելով նաւատորմի գիծը, կը մօտենայ ափին և կէջեցնվի կայսերական զրօշակը, այն ժամանակ նաւատորմից և ամրոցներից տեղի կունենայ երկրորդ անգամ կայսերական թնդանօթաձգութիւն։ Սեվաստոպոլում մարմինը կը դիմաւորեն՝ քաղաքային հոգեւորականութիւնը, զինուորականները, ծովային և քաղաքացիական իշխանութիւնները, ազնուականութեան և քաղաքային վարչութեան ներկայացուցիչները և աշակերտները։ Նորին Մեծութիւնը կը բարեհաճի Կայսերական Ընտանիքի անդամների, Պալատի մինիստրի և գեներալ ադիւտանտների հետ բարձրացնել դագաղը և դնել նաւահանգիստում պատրաստած տեղի վրա. այն ժամանակ կը կատարվի հոգեհանգիստ, որից յետոյ դագաղը կը դնվի սգային վագոնի մէջ. զօրքերը պատիւներ կը տան և արտիլերիան թնդանօթներ կարձակի։ Երբ գնացքը կը շարժվի և կերևայ հարաւային նաւահանգիստի ափի մօտ, նաւատորմից տեղի կունենայ Կայսերական թնդանօթաձգութիւն. քաղաքային բոլոր եկեղեցիներում զանգահարութիւն կը լինի. նաւահանգիստում կը լինի պատուաւոր պահնակախումբ։ Սգավագոնի մէջ դագաղը ծածկված կը լինի կայսերական ծածկոցով, որ ներս կը տանեն չորս գեներալ-ադիւտանտներ. դագաղի վրա կը զրվի Կայսերական թագ։ Սգագնացքը Սեվաստոպոլից կերթայ Սիմֆէրոպոլով. Սպասով Սկիտով. Խարկովով, Կուրսկով, Օրէլով և Տուլայով Մոսկվա, իսկ Մոսկվայից Տվէրով Պետերբուրգ։ Նոյն գնացքով կուղեւորվեն այն բոլոր անձինք, որոնք պէտք է ուղեկցեն մարմինը մինչև Պետերբուրգ։ Մոսկվայում դագաղը մարմնով կը փոխադրվի Արխանգելեան մայր եկեղեցին առանձին հանդիսակատարութեամբ, իսկ այնտեղից—Նիկոլայեվսկայա երկաթուղու կայարանը։ Եալտայից մինչև Պետերբուրգ ամբողջ ճանապարհի վրա օր ու գիշեր անընդհատ հերթապահութիւն կը լինի։ Գնացքի կանգ առնելու ժամանակ նահանգական քաղաքներում, մարմնի դիմաւորման համար կայարաններում կը հաւաքվեն եպիսկոպոսները տեղական հոգեւորականութեան հետ միասին, նահանգապետը, տեղական զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները, ազնուականութեան, զեմստվոյի և քաղաքային վարչութեան ներկայացուցիչները. դագաղի վրա հոգեհանգիստներ են կատարվում. պատուաւոր պահնակախումբեր նշանակվում են տեղական զօրքերից, իսկ աղտա զօրքերը կը կանգնեցնվեն ճանապարհի երկարութեամբ կանգ առնելու կայարանների մօտ։—«Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ կեանքի մինչև վերջին օրերը հանգուցեալ Թագաւորը չէր դադարում գործերով զբաղվելուց. Բարձրագոյն բոլոր հրամանների վա մինչև հոկտեմբերի 19-ը Նորին Մեծութեան սեփական ձեռքով և հաստատ կերպով գրված է՝ «Ливадія», իսկ լուսանցքներում՝ «Карашо»։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 25-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	92 ր.	75 կ.
Բերլին վրա 100 մարկ	— . .	45 ր.	35 »
Պարիզի վրա 100 ֆրանկ	— . .	36	» 80 »
Ոսկի — — արժէ	. .	7	» 46
Մաքսային կուպոններ	— . .	149	» 50 »
Արծաթ — —	. .	—	» — »
Օբրայեն դիսկոնտ	— . .	5	» 7 »
Եզիպ. բանկի 5% տոմս 1 շրջանի	.	—	» — »
— — — — 2-րդ	.	—	» — »
— — — — 3-րդ	. .	—	» — »
4% պետական բէնտա.	. . . .	95 3/8	» — »
5% ոսկեայ բէնտա 1884 թ.	. . .	160	» — »
4 1/2 ոսկեայ փոխառութիւն.	. . .	—	» — »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.		—	» — »
— — — 2-րդ	—	—	» — »
— — — 3-րդ	—	—	» — »
— — — 4-րդ	—	—	» — »
Ներքին 5% առաջին փոխառութ.		239	» — »
— — երկրորդ	—	219	» — »
Պետական երկաթուղային բէնտա.		—	» 25 »
4 1/2 բէնտա		101	» 25 »
4% ներքին փոխառութեան . . .		95	» — »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		—	» — »
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — — .		191	» 50 »
4 1/2% վիսյակ. գիւղ. հող. բանկի.		—	» — »
4 1/2% գրաւական թղթեր կալուած.		—	» — »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		150	» 75 »
— — — թղթադ. .		—	» — »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		100	» 75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		99	» 75 »
Օդէսայի — —		100	» — »
Թիֆլիսի — —		96	» 50 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		101	» — »
— — Քուտայիսի —	.	101	» — »

Ս. Պետերբուրգի քօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտարարում եմ ի գիտութիւն մեր թարգմանիչների, որ թարգմանում եմ և շուտով պատրաստ կը լինի Մանտէգացցայի „Счастье и трудъ“ գիրքը։

Յակ. Սաւիկեանց
1—1

Հարկաւոր եմ համարում յայտնել ի գիտութիւն մեր թարգմանիչների, որ թարգմանել եմ և շուտով լոյս կը տեսնի Բօկլի „Вліяніе женщинъ на успѣхи знанія“ վերնագրով գիրքը։

Ռ. Յովհաննէսեանց
1—1

ԿԱՐ ՈՒ ՉԵՒԻ ԴՊՐՈՑ
ԲԱԳԻՈՒՄ

Ընդունում եմ աշակերտուհիներ և տալիս եմ կար ու ձեւի դասեր շատ մատչելի գնով։

Հասցէն. Բագու, Արմենական փողոց, տուն Կրասիլնիկեանցի։

ՏԻԿԻՆ Շ. ԵՒԱՆԴՈՒԼԵԱՆՑ
(№ 124) 1—3

ՎԵՀ ՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆՈՎ Արշակ Ազապետեանցի թարգմանած և Միքայէլ Բաղինեանցի հրատարակած „ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ“ վիրնագրով գիրքը, 24 պատկերով, որի բնագիրը լուսաւորութեան մինիստրութիւնից պատկված է ոսկէ մեդալով, մուծված է Հայոց երկսեռ եկեղեցական ծխական դպրոցների դասագրքերի ցանկը։ Գինն է 60 կոպ. Ճանապարհածախսը վաճառողի վրա է։ Յանկացողները թող դիմեն. въ Тифлисъ, Грязная улица, собс. домъ, № 11, Михаилу Багинянцу.
1—1

„ՏԱՐԱԶ ԵՒ ԱՂԲԻՒՐ“

Շարունակվում է ներկայ 1894 թ. բաժանորդագրութիւնը

և

ԲԱՑՎԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՑ 1895 ԹՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան գինը 3 ր., (արտասահման 4 ր.), „ՏԱՐԱԶԻՆԸ“ 6 ր. (արտասահման 10 ր.)։

Նոյեմբերի 1-ից մինչև յունվար 1-ը „ՏԱՐԱԶԻ“ բաժանորդագինը ճանապարհածախսով 1 ր. է, որը կարելի է ուղարկել և պօստի մարկներով։

Այդ երկու ամսվայ ընթացքում պէտք է տպագրվեն ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսր Ալէքսանդր III-ի մահվան և թաղման վերաբերեալ պատկերներ ամենայն մանրամասնութեամբ։ Կայսրի հիւանդութիւնը, մահը, կայսերական ընտանիք, Լիւդիա պարտ, բժշկապետներ, քահանաներ, Բարձրագոյն անձինք, մինիստրներ, Կայսրի դագաղը և յուղարկաւորութիւնը սկսած Լիվադիայից մինչև Պետերբուրգ։ Եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներ, թագաւորներ, իշխաններ, իշխանուհիք, Օդեսատառ Կայսրի ընտանիք, Նոր Թագաւորող Թագաւոր Կայսր Նիկոլայ II, ժառանգ Նորին Մեծութեան Մեծ Իշխան Գէորգի Ալէքսանդրովիչ, Պետերբուրգում գտնվող բոլոր գեսպաններ, ներկայացողներ, պատկեր, պարտներ Զմեռային և Անիչկով, Պետերբուրգը սգի մէջ, Տաճարներ և այլն։ Արդէն հեռագրով պատուիրված են այդ բոլոր պատկերները և պարբերաբար կը ստացվեն Թիֆլիսում։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція „Агбюръ“ կամ „Таразъ“. Rédaction du journal „Agbur et Taraz.“։

Խմբագիր հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
(№ 124) 1—5

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ներկայ տարվայ խօլերային հիւանդութիւնների մեծամասնութիւնը կապ ունի կուրի ջրի խմելու հետ, ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՍՐԱՆՈՎ ՀՐԱՒԻՐՈՒՄ Է ԱԶԳԱՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՊԱՅՄԱՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿՈՒՐ ԳԵՏԻՑ ՎԵՐՑՐԱԾ ԶՈՒՐԸ ԽՄԵԼՈՒՑ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԱՅԴ ԶՈՒՐԸ ՏՆԱՑԻՆ ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾԵԼՈՒՑ, մանաւանդ որ քաղաքային զուտայի բաժիկ Ռէխտազամէր կուր գետի մէջ գտել է խօլերային բացիլներ։

(№ 123) 1—2

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թուին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անավերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻՒԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիօնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . .
„Театральныя“. . . . . 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ՀԱՅՈՑ վիճակային կօնսիստորիայի տաճարի մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ 31-ին սոյն հոկտեմբերի, առանց կրկնաձուրդի, վարձով տալու համար էջմիածնապատկան եռայարկ տունը 6-րդ քաղաքամասում և այդին Օրթաճալայի։

Անդամ կօնսիստորիայի՝ Համազասպ վարդապետ
(№ 121) 3—3

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 բուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-դրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ռէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 102—130 (2·)

„Ольфакторіумъ Нудилинъ“
М. Д. ЖИРМУНСКАГО.

ՄԻԱՅՈՑ ԽԱՐՌՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դէպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոյն ծխական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում։
№ 128 (91 թ.) 36—40

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Октября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.